

**ՀՀ մարզերի համայնքներում 2013 թվականի ընթացքում
իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված ակտերում
արձանագրված հիմնական խախտումների վերաբերյալ**

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի, 28.12.2012թ «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 190-Ա հրամանի համաձայն նախատեսվել էր հսկողություն իրականացնել ՀՀ 10 մարզերի (ՀՀ Արարգածոտնի մարզ՝ 37, ՀՀ Արարատի մարզ՝ 35, ՀՀ Արմավիրի մարզ՝ 29, ՀՀ Գեղարքունիքի մարզ 26, ՀՀ Լոռու մարզ՝ 38, ՀՀ Կոտայքի մարզ՝ 24, ՀՀ Շիրակի մարզ՝ 39, ՀՀ Սյունիքի մարզ՝ 36, ՀՀ Վայոց Ձորի մարզ՝ 10 և ՀՀ Տավուշի մարզ՝ 19) 293 համայնքներում: Հսկողությունն իրականացվել է աշխատանքային ծրագրին համապատասխան:

Ստորև ներկայացվում է հսկողության արդյունքում արձանագրված խախտումների վերաբերյալ տարեկան կտրվածքով տեղեկատվությունն՝ ըստ մարզերի:

ՀՀ Վայոց ձորի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 15 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել << Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի և 40-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, համաձայն որոնց իրավական ակտը կարող է պարունակել նախաբան, որը սահմանում է իրավական ակտի ընդունման նպատակներն ու պատճառները: Նախաբանում չեն զետեղվում նորմատիվ դրույթներ: Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերը չեն կարող ունենալ միևնույն վերնագիրը: Ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի վերնագիրը չպետք է նույնությամբ կրկնի ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի վերնագիրը: Անհատական կամ ներքին իրավական ակտի վերնագիրը չպետք է նույնությամբ համընկնի նորմատիվ իրավական ակտի վերնագրին: Խախտումը արձանագրվել է Ռինդ, Կարմրաշեն, Փոռ, Արին, Բարձրունի, Գնիշիկ, Ազատեկ համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը, համաձայն որի, համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ: Խախտումն արձանագրվել է վարչական հսկողության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր համայնքներում:

Չի պահպանվել <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի պահանջը, համաձայն որի բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու դեպքում պետք է տարվի գնման ընթացակարգ: Խախտումը արձանագրվել է Արին, Բարձրունի, Գնիշիկ, Մարտիրոս, Ազատեկ համայնքներում:

Չի պահպանվել ՀՀ կառավարության 10.02.2011թ.-ի թիվ 168-Ն որոշման 20-րդ կետի պահանջը, համաձայն որի գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը համարվում է գնման պլանը: Խախտումը արձանագրվել է Բարձրունի, Կարմրաշեն, Արին համայնքներում :

Չի պահպանվել ՀՀ կառավարության 10.02.2011թ.-ի թիվ 168-Ն որոշման պահանջները, համաձայն որի գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի պայմաններում շինարարական աշխատանքները իրականացվում են տեխնիկական և հեղինակային հսկողության առկայության պայմաններում: Խախտումն արձանագրվել է Սարավան, Ազատել համայնքներում :

ՀՀ Գեղարքունիքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 34 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի <<գ>> ենթակետի պահանջը, Համաձայն որի պետք է ապահովել համայնքի բյուջեներով նախատեսված եկամուտների ու ծախսերի հիմնավորումը, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաստատված հաշվարկային ցուցանիշների հետ: Խախտումը արձանագրվել է Գանձակ, Աստղաձոր, Սարուխան, Ջաղացաձոր, Շատջրեք և Դարանակ համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ, 12-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց նախատեսվում է տվյալ հարկատեսակի գծով մուտքեր, նշելով հարկվող սուբյեկտների ցանկը, աղբյուրները: Տեղական տուրքը կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը: Խախտումը արձանագրվել է Կարմիրգյուղ, Աստղաձոր, Սարուխան, Նորակերտ, Չկալովկա, Արծվանիստ, Լիճք, Խաչաղբյուր, Լճավան, Սոթք, գ. Մարտունի, Վահան, Ծակքար, Ակունք, Գեղիովիտ, Դրմաշեն և Լճափ համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր: Խախտումը արձանագրվել է Ծաղկունք, Նորակերտ, Լիճք, գ. Մարտունի, Ծակքար, Աստղաձոր, Լճափ, Ջաղացաձոր, Փամբակ, Ակունք, Ն. Գետաշեն և Շատջրեք համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտերը 2 օրյա ժամկետում չեն ուղարկվել ավագանու անդամներին և չեն փակցվել տեղեկատվական վահանակի վրա: Համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հաշվառման մատյանները: Խախտումը արձանագրվել է Վահան, Արծվանիստ, գ. Մարտունի, Խաչաղբյուր, Կարճաղբյուր, Սոթք, Ջաղացաձոր, Աղբերք Աստղաձոր, Հայրավանք, Վարսեր, Գանձակ,

Սարուխան, Ծաղկունք, Ծակքար, Նորակերտ, Լճավան, Սոթք, Խաչաղբյուր, Նորակերտ, Փ. Մասրիկ, Գեղարքունիք և Դարանակ համայնքներում:

Չի պահպանվել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80 հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2010թ-ի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման պահանջները, համաձայն որոնց համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրերը և խոտարքները օգտագործվում են խախտումով: Խախտումը արձանագրվել է Ծաղկունք, Կարմիրգյուղ, Վարսեր, Հայրավանք, Աստղածոր, Սարուխան, Նորակերտ, Հայրավանք, Չկալովկա, Լիճք, Խաչաղբյուր, Կուտական, Սոթք, գ. Մարտունի, Գեղիովիտ, Ն.Գետաշեն և Ակունք համայնքներում:

Չի պահպանվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի պահանջը, համաձայն որի պետք է իրականացվի հսկողություն առևտրի և ծառայությունների բնագավառում: Խախտումը արձանագրվել է Արծվանիստ, Ծաղկունք, Կարմիրգյուղ, Վարսեր, Հայրավանք, Աստղածոր, Սարուխան, Նորակերտ, Հայրավանք, Գանձակ, Չկալովկա, Լիճք, Խաչաղբյուր, Կարճաղբյուր, Կուտական, Լճավան, Ծակքար, Սոթք, գ. Մարտունի, Վահան, Լճափ և Արտանիշ համայնքներում:

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 40-րդ հոդվածների պահանջները, համաձայն որոնց ընդունված ակտերի գերակշիռ մասը իրենց կառուցվածքով, վերնագրերով և իրավական տեխնիկայի կանոններով պետք է համապատասխանեն ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին: Խախտումը արձանագրվել է Չկալովկա, Դարանակ, Ն.Գետաշեն, Փ. Մասրիկ, Գեղիովիտ, Ակունք, Աղբերք, Կութ և Արտանիշ համայնքներում:

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելուց հետո՝ սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, պետական փորձաքննության համար ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն: Նշված ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չուղարկված նորմատիվ իրավական ակտերը համարվում են անվավեր: Խախտումը արձանագրվել է Աղբերք, Լճափ, Փամբակ, Ջաղացածոր, Ակունք, Ն.Գետաշեն, Կութ, Վահան և Մարտունի համայնքներում:

ՀՀ Տավուշի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 20 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջները, համաձայն որոնց ընդունված ակտերի գերակշիռ մասը իրենց կառուցվածքով, վերնագրերով և իրավական տեխնիկայի կանոններով պետք է համապատասխանեն ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին: Խախտումը արձանագրվել է Լուսածոր, Կիրանց և Աճարկուտ համայնքներում:

Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը, համաձայն որի համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ Հաստատանի

Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում բյուջեի ընթացքի մասին հաղորդումներ պետք է ներկայացնի համայնքի ավագանուն: Խախտումը արձանագրվել է Վարագավան, Պառավաքար, Լուսաձոր, Կիրանց և Աճարկուտ համայնքներում:

Չի պահպանվել <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի համայնքի ղեկավարի կողմից պետք է հաստատվի համայնքային ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը: Խախտումը արձանագրվել է Լուսաձոր, Կիրանց և Աճարկուտ համայնքներում:

ՀՀ Արմավիրի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն Հայաստանի Հանրապետության մարզի թվով 33 համայնքներում համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլխով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները, մասնավորապես՝ 37-րդ 40-րդ հոդվածների պահանջները, համաձայն որոնց ընդունված իրավական ակտերի գերակշիռ մասը իրենց կառուցվածքով, վերնագրերով և իրավական տեխնիկայի կանոններով պետք է համապատասխանեն գործող օրենսդրական պահանջներին: Խախտումները արձանագրվել են մարզի Վարդանաշեն, Արգինա, Այգեկ, Բաղրամյան(Էջմ.), Ծաղկալանջ, Դոդս, Մուսալեռ, Ալաշկերտ, Առատաշեն, Մյասնիկյան, Նորավան, Տանձուտ և Երասխահուն գյուղական համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարի կողմից ընդունված անհատական իրավական ակտերը սահմանված կարգով, համայնքի ղեկավարի կողմից երկօրյա ժամկետում պետք է ուղարկվեն համայնքի ավագանու անդամներին, ինչպես նաև դրանք ընդունելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում պետք է ուղարկվեն, կամ հանձնվեն համապատասխան անձանց, որոնց վրա տարածվում են դրանք: Խախտումը արձանագրվել է մարզի Վարդանաշեն, Արգինա, Այգեկ, Բաղրամյան(Էջմ.), Ծաղկալանջ, Դոդս, Երասխահուն, Արաքս(Էջմ.), Մրգաստան, Ջրառատ, Կողբավան, Բագարան, Բամբակաշատ, Մուսալեռ, Ալաշկերտ, Առատաշեն, Մյասնիկյան, Նորավան, Տանձուտ և Արտամետ և Նոր Արտագերս գյուղական համայնքներում:

Չի պահպանվել <<Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու դեպքում պետք է իրականացվի գնման ընթացակարգ: Խախտումը արձանագրվել է մարզի Դաշտ, Նոր Արմավիր, Հացիկ, Մրգաստան, Ջրառատ, Կողբավան, Բագարան, Բամբակաշատ, Մուսալեռ, Ալաշկերտ, Առատաշեն, Մյասնիկյան, Նորավան, Տանձուտ և Արտամետ գյուղական համայնքներում:

ՀՀ Կոտայքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 22 համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմանկան խախտումները.

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջը, համաձայն որի ավագանու որոշումները առաքվում են մարզպետարան յոթնօրյա ժամկետում: Խախտումը արձանագրվել է Արամուս, Կամարիս, Պոռոշյան, Ակունք, Բալահովիտ, Գեղարդ, Արագյուղ, Մրգաշեն, Արտավազ, Մայակովսկի համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր: Խախտումը արձանագրվել է Արամուս, Կամարիս, Արզնի, Պոռոշյան, Բալահովիտ, Գեղարդ, Արագյուղ, Մրգաշեն, Արտավազ գյուղական համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման: Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումը կարգավորվում է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով սահմանված կարգով և ձևով: Խախտումը արձանագրվել է վարչական հսկողության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17-րդ և 17.1-րդ հոդվածների /մաս 10/ պահանջները, համաձայն որոնց առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտների հսկողություններ ստուգվող ժամանակաշրջանում չեն իրականացվել, կամ իրականացվել են մասնակի և ոչ լիարժեք: Խախտումը արձանագրվել է Արամուս, Կամարիս, Ալափարս, Նոր գյուղ, Պոռոշյան, Եղվարդ, Բալահովիտ, Գողթ, Արագյուղ, Մեղրաձոր, Մրգաշեն, Բջնի, Նոր Հաճն, Զորավան, Մայակովսկի համայնքներում:

Չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, 1-ին մասի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով՝ աշխատակազմի, բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները չի կատարել /օրենսդրությամբ սահմանված կարգով/, չեն ներկայացվել ավագանու հաստատմանը կամ կանոնադրությունները գրանցված չեն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից: Խախտումը արձանագրվել է Արամուս, Կամարիս, Արզնի, Նոր գյուղ, Պոռոշյան, Արգել, Ակունք, Բալահովիտ, Գեղարդ, Գողթ, Արագյուղ, Մրգաշեն, Արտավազ, Բջնի, Զորավան, Մայակովսկի համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-45-րդ հոդվածների պահանջները, համաձայն որոնց չեն պահպանվել օրենսդրական տեխնիկայի կանոնները:

Խախտումը արձանագրվել է վարչական հսկողության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Խախտումը արձանագրվել է Արամուս, Մրգաշեն, Արգել, Ջորավան, Ալափարս, Եղվարդ, Բալահովիտ, Գողթ և Պռոշյան համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը, համաձայն որի իրավական ակտում կիրառվող ամսաթվերում տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը տառերով: Խախտումը արձանագրվել է Արգել, Բջնի, Ալափարս, Արտավազ, Մեղրաձոր, Մայակովսկի, Ակունք, Բալահովտ, և Պռոշյան համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի օրենքի հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված կամ չհամարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը միայն համարակալված ենթակետերի: Խախտումը արձանագրվել է Արամուս, Կամարիս, Մրգաշեն, Արգել, Ջորավան, ՆորՀաճն, Բջնի, Ջորավան, Արտավազ, Մայակովսկի, Արագյուղ, Եղվարդ, Ակունք, Բալահովտ, Գողթ և Պռոշյան համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, թիվը և <Օրենք> բառը: Խախտումը արձանագրվել է Արամուս, Կամարիս, Մրգաշեն, Բջնի, Ջորավան, Մայակովսկի, Գառնի, Գողթ և Պռոշյան համայնքներում:

Չի պահպանվել <<Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի անշարժ գույքի գնահատումը պարտադիր է /անշարժ գույքը պետության կամ համայնքների կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում/: Խախտումները արձանագրվել են՝ Նոր Հաճրն, Արգել, Բալահովիտ և Գառնի համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի է 1-ին կետի պահանջը, համաձայն որի, եթե ծագած հարաբերությունները կարգավորված չեն օրենքով, ապա այն կանոնակարգվում է համանման օրենքներով: Խախտումը արձանագրվել է Գեղաշեն, Բալահովիտ, Բջնի, Գառնի, Եղվարդ, Կամարիս, Մայակովսկի, Մեղրաձոր և Պռոշյան համայնքներում:

Չի պահպանվել ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրք» 172-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց կանոնակարգվում են պայմանագրային հարաբերությունները: Խախտումները արձանագրվել են՝ Արագյուղ, Արամուս, Բջնի, Գեղաշեն, Գողթ, Եղվարդ, Մայակովսկի և Պռոշյան համայնքներում:

Չի պահպանվել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ի կետը և ՀՀ կառավարության 25 օգոստոսի 1998 թվականի N 525 որոշման 1-ի կետի 1-ի մասի պահանջները, համաձայն որոնց ծախսերի հաշվեգրման համար նյութական և ոչ նյութական

ակտիվների, ինչպես նաև ծառայությունների (աշխատանքների) ձեռքբերման ժամանակ իրականացված գործարքները հավաստող փաստաթղթեր կարող են համարվել, մասնավորապես՝ բ) հաշիվ-ապրանքագիրը, ե) պահեստի ելքի անդորրագիրը (ապրանքագիրը), գ) կատարողական ակտը: Խախտումները արձանագրվել են՝ Արգել, Նոր Գյուղ, Բալահովիտ, Գառնի, Գողթ, Եղվարդ, Մայակովսկի, Մրգաշեն և Պոռոչյան համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջները, համաձայն որոնց ավագանին սահմանում է համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Խախտումը արձանագրվել է Արամուս, Կամարիս, Արգել, Ակունք, Բալահովիտ, Գեղարդ, Մրգաշեն, Արտավազ և Մայակովսկի համայնքներում:

ՀՀ Սյունիքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 37 համայնքների համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետը, համաձայն որի համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Խախտումը արձանագրվել է վարչական հսկողության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր 37 համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1.1-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին է ուղարկում և համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցնում: Խախտումը արձանագրվել է մարզի՝ Ձորաստան, Դարբաս, Լոր, Գետաթաղ, Խոզնավար, Շաքի, Սառնակունք, Ծղուկ, Շաղաթ, Կաղնուտ Ճակատեն, Նժդեհ, Բնունիս, Տորունիք, Հացավան, Վանեք, Քաշունի, Շուռնուխ և Կուրիս համայնքներում:

Չի պահպանվել ՀՀ կառավարության 11.07.2002 թ N1146-Ն որոշմամբ սահմանված կարգը, համաձայն որի իրավական ակտերը պետք է հաշվառվեն: Խախտումը արձանագրվել է մարզի՝ Ձորաստան, Դարբաս, Լոր, Գետաթաղ, Շաքի, Սառնակունք, Ծղուկ, Շաղաթ, Կաղնուտ Նժդեհ, Բնունիս, Տորունիք, Հացավան, Վանեք, Քաշունի, Շուռնուխ, Կուրիս, Լեհվազ, Սյունիք, Եղվարդ, Գուդեմնիս, Շվանիձոր և Լիճք համայնքներում:

Չի պահպանվել ՀՀ կառավարման նախարարի 29.08.2006թ N12-Ն հրամանով սահմանված կարգի 5-րդ կետի պահանջը, համաձայն որի 20-օրյա ժամկետում պետք է հրավիրել մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգային նիստեր: Խախտումը արձանագրվել է Առաջածոր, Շրվենանց, Ձորաստան, Դարբաս, Լոր, Գետաթաղ, Աղիտու, Խոզնավար, Խոտ, Դավիթբեկ, Շաքի, Սառնակունք, Ծղուկ, Շաղաթ, Կաղնուտ, Արծվանիկ, Թանահատ, Եղեգ, Ճակատեն, Նժդեհ, Բնունիս, Տորունիք, Հացավան, Վանեք, Քաշունի, Շուռնուխ, Կուրիս, Լեհվազ, Եղվարդ, Գուդեմնիս, Շվանիձոր և Լիճք համայնքներում:

Չի պահպանվել ՀՀ տարածքային կառավարման նախարարի 19.01.2009թ N03-Ն հրամանով հաստատված կարգը, համաձայն որի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը ծանուցվում է աշխատակազմի բոլոր անդամներին: Խախտումը արձանագրվել է մարզի Առաջաձոր, Շրվենանց, Ձորաստան, Դարբաս, Լոր, Գետաթաղ, Աղիտու, Խոզնավար, Խոտ, Դավիթբեկ, Շաքի, Սառնակունք, Ծղուկ, Շաղաթ, Կաղնուտ, Նժդեհ և Տորունիք համայնքներում:

ՀՀ Արագածոտնի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 40 համայնքների համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-ի կետի պահանջը, համաձայն որի բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու դեպքում պետք է տարվի գնման ընթացակարգ: Խախտումը արձանագրվել է վարչական հսկողության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր 40 համայնքներում:

Չի պահպանվել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի պահանջները համաձայն որի համայնքների քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարում, քաղաքաշինական կանոնադրության կազմում պետք է ներկայացվեր համայնքի ավագանու հաստատմանը, որը չի ներկայացվել: Խախտումը արձանագրվել է վարչական հսկողության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր 40 համայնքներում:

Չի պահպանվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 12-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց նախատեսվել են տվյալ հարկատեսակի գծով մուտքեր, չնշելով հարկվող սուբյեկտների ցանկը, աղբյուրները: Տեղական տուրքը կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը: Խախտումը արձանագրվել է Բյուրական, Ծաղկահովիտ, Փարպի և Ուշի համայնքներում:

Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր: Խախտումը արձանագրվել է Նոր Եղեսիա և Ուշի համայնքներում:

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջները, համաձայն որոնց ընդունված ակտերի գերակշիռ մասը իրենց կառուցվածքով, վերնագրերով և իրավական տեխնիկայի կանոններով պետք է համապատասխանեն ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին: Խախտումը արձանագրվել է Արագածոտն համայնքում:

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները, համաձայն որոնց գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի նախաբանում պետք է նշվի թե՛ ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի, դրա

մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Խախտումը արձանագրվել է Նոր Եդեսիա համայնքում:

Չի պահպանվել <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 169-րդ հոդվածի 16-րդ կետի կետի պահանջները, համաձայն որոնց առանձին տնտեսվարողներ առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում պետք է համապատասխան թույլտվություն ունենան գործունեություն իրականացնելու համար: Խախտումը արձանագրվել է Փարպի, Ծաղկահովիտ և Բյուրական համայնքներում:

Չի պահպանվել ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1471-Ն որոշման 8-րդ կետը՝ համաձայն որի գործատուն աշխատողի պահանջով աշխատողին տրամադրում է քաղվածք տեղեկագրից՝ ոչ ավելի, քան աշխատած վերջին մեկ տարվա համար: Խախտումը արձանագրվել է՝ Ալագյազ, Հնաբերդ և Քուչակ համայնքներում:

Չի պահպանվել <<Եկամտահարկի մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, համաձայն որոնց խախտվել է եկամտահարկի հաշվարկման դրույքաչափերը: Խախտումը արձանագրվել է՝ Հնաբերդ և Քուչակ համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջ համաձայն որի տեղական տուրքը կամ վճարը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է տեղական տուրք կամ վճար գանձող համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձանց վրա: Խախտումը արձանագրվել է Ալագյազ համայնքում:

ՀՀ Շիրակի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 41 համայնքների ավագանիների լիազորությունների և համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները՝

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները՝ աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տասը օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից: Նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին: Նիստի օրակարգը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ: Խախտումներն արձանագրվել են Ջորակերտ, Գոգհովիտ, Հովտուն, Թորոսգյուղ, Աղվորիկ, Սարագյուղ, Գետափ, Ողջի, Ջրափի, Բերդաշեն, Արեգնադեմ, Հովտուն, Բավրա, Հովտաշեն, Ջարիշատ, Բայանդուր, Յողամարզ և Գյումրի համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ գլխով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների պահանջները, համաձայն որոնց ընդունված իրավական ակտերի գերակշիռ մասն իրենց կառուցվածքով, հերթական համարների սահմանումով, իրավական ակտի բնույթի մասին կատարված տառերի նշումներով, վերնագրերով, հղումների և օրենսդրական տեխնիկայի այլ կանոնների կիրառումով չեն համապատասխանում <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-

րդ, 43-րդ և 45-րդ հոդվածների պահանջներին: Խախտումը արձանագրվել են Ջորակերտ, Հովտուն, Գոգհովիտ, Թորոսգյուղ, Սարագյուղ, Գետափ, Բերդաշեն, Գուսանագյուղ, Արեգնադեմ, Սարալանջ, Ձորաշեն, Բավրա, Հովտաշեն, Ջարիշատ, Սարագյուղ, Փոքր Սեպասար, Ջարիշատ, Յողամարգ և Արդենիս համայնքներում:

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որոնց իրավական ակտում փոփոխությունները կատարվում են՝ բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոփոխարինելու միջոցով.

բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով.

բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով.

բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով: Խախտումներն արձանագրվել են Ջորակերտ, Գոգհովիտ, Հովտուն, Թորոսգյուղ, Աղվորիկ, Սարագյուղ, Գետափ, Ողջի, Բերդաշեն, Արեգնադեմ, Հովտուն, Հովտաշեն, Ջարիշատ, Բայանդուր և Յողամարգ համայնքներում:

Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ «Հաստատանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն: Խախտումը արձանագրվել է Յողամարգ, Ջորակերտ, Գոգհովիտ, Արդենիս, Բերդաշեն, Արեգնադեմ, Ձորաշեն, Բավրա, Հովտաշեն, Ջարիշատ, Փոքր Սեպասար, Հովտուն և Գյումրի համայնքներում:

Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում: Խախտումն արձանագրվել է Բայանդուր, Գյումրի, Մեծ Մանթաշ, Աղինի, Բագրավան և Գուսանագյուղ համայնքներում:

Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի պահանջը համաձայն որի թերություններով են կազմվել համայնքի զարգացման քառամյա ծրագրերը, նրանցում լիարժեք տեղեկություններ չեն ներկայացվել համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի, համայնքի ֆինանսական միջոցների գնահատման և քառամյա ժամկետում բյուջեի կատարման կանխատեսումների վերաբերյալ: Չեն տրվել առաջադրված հիմնախնդիրների նկարագրություններ, աշխատանքների ծավալներ, ակնկալվող արդյունքներ, պահանջվող ֆինանսական միջոցներ ու ֆինանսավորման աղբյուրներ, չեն նշվել կատարման ժամկետներ: Խախտումն արձանագրվել է Թորոսգյուղի, Բայանդուրի, Ջրափի, Հոռոմ, Ջորակերտ, Հովտուն, Լանջիկ, Շաղիկ, Աղվորիկ, Նոր Կյանք, Սարագյուղ, Կրաշեն և Գետափ համայնքներում:

Չի պահպանվել ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջները համաձայն որոնց համայնքների սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության առանձին հողամասեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարձակալության իրավունքով օգտագործման չեն տրամադրվել: Խախտումը արձանագրվել է Փոքր Սեպասար, Գետափ, Հովտուն, Յողամարգ, Ջորակերտ, Գոգհովիտ, Թորոսգյուղ, Բերդաշեն, Սարագյուղ,

Արդենիս, Սարալանջ, Գուսանագյուղ, Արեգնադեմ, Ձիթհանքով, Ձորաշեն, Բավրա, Հովտաշեն և Ջարիշատ համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը համաձայն որի ամբողջությամբ չի իրականացվել բյուջեի կատարումն ապահովելու համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները: Խախտումը արձանագրվել է Հոռոմ, Հովտուն, Սարագյուղ, Կրաշեն, Գետափ, Բերդաշեն, Աղին, Ջրափի, Արեգնադեմ, Բավրա, Փոքր Սեպասար և Յողամարգ համայնքներում:

Չի պահպանվել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի մայիսի 3-ի N 05-Ն, 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն, 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանների պահանջները, համաձայն որոնց՝ աշխատակազմերում պետք է վարվեն վերապատրաստման հաշվառման, համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման, մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման մատյաններ: Խախտումը արձանագրվել է Հովտաշեն, Փոքր Սեպասար, Աղին, Յողամարգ, Հովտուն, Ջորակերտ, Գոգհովիտ, Արևիկ, Թորոսգյուղ, Սարագյուղ, Արդենիս, Սարալանջ, Գետափ, Բերդաշեն, Արեգնադեմ, Նահապետավան, Ձիթհանքով, Ձորաշեն, Բավրա, Ջարիշատ, Գյումրի, Շիրակ, Պեմզաշեն, Արդենիս և Աշոցք համայնքներում:

ՀՀ Լոռու մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 38 համայնքների համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ համաձայն որի առանց թույլտվության ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբեկտներում՝ ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացում իրականացնելը առաջացնում է տուգանք: Խախտումը արձանագրվել է Լեռնավան, Լեռնապատ, Վահագնի, Սարահարթ, Սարամեջ, Մեծավան, Օձուն և Ծաթեր համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը՝ համաձայն որի տեղական տուրք (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրք կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը» Խախտումը արձանագրվել է Գուգարք, Շամլուղ, Արջուտ, Աբրի և Լեռնավան համայնքներում:

Չի պահպանվել <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ, որի չափը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը: Խախտումը արձանագրվել է Կարմիր Աղեկի համայնքում:

Չի պահպանվել <<<< աշխատանքային օրենսգրքի>> 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի ամենամյա արձակուրդային վճարը աշխատողին պետք է վճարել

արձակուրդ մեկնելուց առնվազն երեք օր առաջ: Խախտումը արձանագրվել է Ախթալա, Լեռնապատ, Յաղդան, Օծուն, Ձյունաշող, Մեծավան, Մեծ Այրում և Ծաղկաշատ համայնքներում:

Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի պահանջները՝ համաձայն որոնց առևտրի և ծառայությունների բնագավառում չի իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ: Խախտումը արձանագրվել է Ախթալա, Շամլուղ, Աքրի, Գուգարք, Լեռնապատ, Լեռավան, Ծաթեր, Ծաղկաշատ, Մղարթ, Մեծավան, Մեծ Այրում, Մեծ Պարնի, Սարահարթ, Սարամեջ, Սարչապետ, Վահագնի և Օծուն համայնքներում:

Չի պահպանվել «Ժամանակավոր անաշխատունակության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը՝ համաձայն որի «վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու ամսվան նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների համար տվյալ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով: Սույն մասի իմաստով եկամուտ են համարվում սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված նպաստը»: Խախտումը արձանագրվել է Ախթալա, Շամլուղ, Օծուն և Մեծավան համայնքներում:

Չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջը՝ համաձայն որի գնման առանձին ընթացակարգ անցկացնելուց խուսափելու նպատակով արգելվում է գնումը բաժանել առանձին չափաբաժինների՝ բաց կամ սահմանափակ ընթացակարգի կիրառումից խուսափելու նպատակով: Խախտումն արձանագրվել է Լեռնավան, Սարալանջ, Սարչապետ, Սարահարթ, Մեծավան և Օծուն համայնքներում:

Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է եկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին: Խախտումը արձանագրվել է վարչական հսկողության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր համայնքներում՝ բացառությամբ Շամլուղ, Ձյունաշող և Մեծավան համայնքների:

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի իրավական ակտով կարգավորվող իրավահարաբերությունները կարգավորվում են այլ իրավական ակտով և նախկին ակտը պետք է ուժը կորցրած ճանաչվի: Խախտումը արձանագրվել է Ծաթեր, Ծաղկաշատ, Մեղվահովիտ և Նովոսելցովո համայնքներում:

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի նորմատիվ իրավական ակտերում դրա բնույթի մասին կատարվում է «Ն» նշում: Խախտումը արձանագրվել է Ծաղկաշատ, Մղարթ, Լեռնավան, Վահագնի և Սարամեջ համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, որը ներկայացնում է նորընտիր ավագանու հաստատմանը: Խախտումը արձանագրվել է Մղարթ և Ծաղկաշատ համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ համաձայն որոնց համայնքային ծառայողների (բացառությամբ՝ գլխավոր խմբի և առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների) նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքերում աշխատակազմի քարտուղարը: Խախտումը արձանագրվել է Աքորի, Ախթալա, Ծաթեր, Լեռնապատ, Մեծ Այրում, Մղարթ, Շամլուղ և Օծուն համայնքներում:

ՀՀ Արարատի մարզ

2012 թվականին նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 33 համայնքների համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունն է ապահովել բյուջեի կատարումը, տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառվել համապատասխան միջոցներ: Խախտումն արձանագրվել է Երասխ, Նորամարգ, Սիսավան, Բաղրամյան, Լանջազատ, Զանգակատուն, Դեղձուտ, Հայանիստ, Կանաչուտ, Ղուկասավան, Նարեկ, Հնաբերդ, Արևաբույր, Այգավան, Այգեպատ, Նորաբաց, Դարբնիկ, Բարձրաշեն և Նոր Կյուրին համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում բյուջեի ընթացքի մասին հաղորդումներ պետք է ներկայացնի համայնքի ավագանուն: Խախտումն արձանագրվել է Երասխ, Բաղրամյան, Լանջազատ, Զանգակատուն, Դեղձուտ, Հովտաշատ, Ղուկասավան, Նարեկ, Հնաբերդ, Արևաբույր, Այգավան, Շաղափ, Նոյակերտ, Արովյան, Այգեպատ, Մասիս, Զրաշեն, Բարձրաշեն, Նոր Կյուրին և Գետափնյա համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները, ապահովում է դրանց նպատակային օգտագործումը: Խախտումն արձանագրվել է Զանգակատուն, Հայանիստ և Արևաբույր համայնքներում:

Չի պահպանվել <<<< Հողային օրենսգրքի>> 80-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 12.04.2001թ. <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը

հաստատելու մասին>> N 286 որոշմամբ հաստատված կարգի պահանջները, համաձայն որոնց համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի համար կնքված վարձակալության պայմանագրերը չունեն նոտարական վավերացում և պայմանագրերից ծագող իրավունքները չեն ստացել պետական գրանցում: Խախտումը արձանագրվել է Ազատավան, Նոյակերտ, Դվին, Կանաչուտ, Ջրաշեն, Արևաբույր, Հովտաշատ, Ջրահովիտ, Բաղրամյան, Զանգակատուն, Այգեպատ, Սիսավան և Արևշատ համայնքներում:

Չի պահպանվել <<<< Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի արձանագրվել են հողամասերի նպատակային նշանակության ինքնակամ փոփոխության դեպքեր: Խախտումը արձանագրվել է Մարմարաշեն, Դվին, Հայանիստ, Հովտաշատ և Արմաշ համայնքներում:

Չի պահպանվել <<<< Հողային օրենսգրքի>> 68-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 12.04.2001թ. <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> N 286 որոշմամբ հաստատված կարգի 231 կետի պահանջները, համաձայն որոնց արձանագրվել են համայնքում սահմանված մեկ հողաբաժնի չափից պակաս մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի օտարման կարգի խախտման դեպքեր: Խախտումը արձանագրվել է Մարմարաշեն, Լանջազատ, Արևշատ, Արմաշ, Գոռավան և Սայաթ-Նովա համայնքներում:

Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 41 –րդ հոդվածի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ, ինչպես նաև համայնքի ղեկավարը աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը: Խախտումը արձանագրվել է Գետազատ, Ղուկասավան, Բաղրամյան, Նոր Կյուրին, Նոյակերտ, Շաղափ, Երասխավան, Արևաբույր, Ջրահովիտ, Դարբնիկ և Բարձրաշեն համայնքներում:

Չի պահպանվել <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 10 և 16 հոդվածների պահանջները, համաձայն որոնց քաղաքաշինական գործունեության փաստաթղթերը (կառույցի ավարտի փաստագրում) մշակված են քաղաքաշինության նախարարության կողմից և պարտադիր կերպով պետք է լրացվեն համայնքապետերի միջոցով: Ինքնահոսի է թողնված կառույցի ավարտի փաստագրումը, որի պատճառով ոչ բոլոր ավարտված կառույցներն ունեն սեփականության գրանցման անձնագիր՝ Այգավան, Այգեպատ, Արևաբույր, Բարձրաշեն, Լանջազատ, Հայանիստ, Խաչփառ, Հովտաշատ, Մրգանուշ և Սիսավան համայնքներում:

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ 40-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց ընդունված ակտերի գերակշիռ մասը իրենց կառուցվածքով, վերնագրերով և իրավական տեխնիկայի կանոններով չեն համապատասխանում ՀՀ <<Իրավական ակտերի մասին>> օրենքի պահանջներին: Խախտումը արձանագրվել է Գետափնյա, Նոյակերտ, Արևաբույր, Բաղրամյան, Երասխ և Նարեկ համայնքներում: